ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

Նոյեմբերի 23-ին կայացավ Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի Ընդհանուր ժողովի նստաշրջանը։

Նիստում լսվեց Գիտությունների Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ, ակադեմիկոս Վ. Գուլքանյանի զեկուցումը՝ 1944 թվի գործունեության և 1945 թվի աշխատանքների պլանի մասին։ Զեկուցողը կանգ առավ 1944 թվի ընթացքում ինստիտուտների կատարած գործունեության վրա, նշեց խոշոր աշխատանքը Հասարակական գիտությունների բաժանմունքի, որը ուսումնասիրել է հայ ժողովրդի պատմության առանձին էտապները, գրականության, լեզվի, երաժշտության հարցերը և այլն։

Իր զեկուցման մեջ զեկուցողը խոսեց այն անելիքների մասին, որ Ակադեմիան պետք է կատարի 1945 թվին։

Ակադեմիկոս Վ. Գուլքանյանի զեկուցման շուրջը բացված մտքերի փոխանակությանը մասնակցեցին ակադեմիկոսներ Գ. Ղափանցյանը, Մ. Թումանյանը, Ա. Հակոբյանը, Ս. Կարապետյանը, ինչպես նաև ինստիտուտների դիրեկտորները։

Ընդհանուր ժողովը հաստատեց Ակադեմիայի 1944 թվի գործունեության հաշվետվությունը և 1945 թվի աշխատանքների պլանը։

Ընդհանուր ժողովը մեծ խանդավառությամբ ընդունեց ողջույնի հեռագիր՝ ուղղված Գերագույն Գլխավոր Հրամանատար, Սովետական Միության Մարշալ ընկեր Ստալինին և ողջույնի հեռագիր՝ ուղղված Հայաստանի Կ(բ)Պ Կենտկոմին։